Ա. ԵՐԻՑՅԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

XIX դարի 70-ական թթ. հայ պատմագիտության շատ ներկայացուցիչներ հետաքրքրել են արևմտահայ ազգային ազատագրական շարժումների ներկան ու ապագան, հայերի և այլազգիների նկատմամբ Թուրքիայում կիրառված հալածանքների քաղաքականությունը, Հայկական հարցի նկատմամբ եվրոպական տերությունների դիվանագիտական խաբկանքներն ու խարդավանքները։ Ստեղծվել են ծավալուն գրականություն, հարուստ փաստական հենքի վրա գրված բազում աշխատություններ, մամուլում տպագրվել են հազարավոր հոդվածներ, որոնցում իրադարձություններն ու երևույթները մեկնաբանվել են տնտեսական-քաղաքական այլևայլ տեսանկյուններից, բացահայտվել են Հայկական հարցի սկզբնավորման և նրա լուծման ընթացքի խափանման ուղղությամբ հայտնի ու գաղտնի նենգ դիտավորությունները, որոնք սկիզբ են առել օսմանյան սուլթանների «խաղաղ» ֆերմաններում, Թուրքիան տնտեսապես և քաղաքականապես ստրկացնող եվրոպական տերությունների պարտադրած կապիտուլյացիաներում, Համիդյան բռնատիրության «զուլումի» քաղաքականության որոգայթներում, կոտորածներում և, վերջապես, արդեն զանգվածային ցեղասպանության ուսմունք դառնում երիտթուրքերի գաղափարախոսների և պետական գործիչների ծրագրային մշակումներում և գործողություններում։

Հայ ազգային-ազատագրական շարժման կողմնորոշման որոնման, Հայկական հարցի լուծման ճշմարիտ ճանապարհը գտնելուն է նվիրաբերել իր հասարակական և գիտական գործունեությունը Ալեքսանդր Երիցյանը (1841—1902)։

Նրա այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում» (երկհատորյակ), որը հայ ժողովրդի նորադարյան պատմության լավագույն սկզբնաղբյուրներից է, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան դպրոցի», «Նյութեր Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի կենսագրության», «Հայերի մասնակցությունը Ռուսաստանի՝ Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ», «Материалы для описания Турецкой Армении: Эрзрумский вилайет» և այլ ուսումնասիրություններ այսօր էլ պատմագիտական անանց արժեքներ են։ Դրանք նաև վկա են այն իրողության, որ XIX դարի վերջին քառորդի հայ հեղինակներից ոչ ոք հայ-ռուսական հարաբերությունների, հայերի ռուսական կողմնորոշման պատմության հիմնահարցերն այնպիսի լայն քննարկման առարկա չի դարձրել, ինչպես Ալ. Երիցյանը։ Ի դեպ, հանուն պատմական ճշմարտության անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ մինչխորհրդային հայ պատմագրության մեջ Ալ. Երիցյանը դարձյալ առաջինն էր, որ դեպի Ռուսաստան հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման մեկնարկ համարեց XVIII դարի սկիզբը։ Մինչ այդ, գրում էր Ալ. Երիցյանը, մեզանում գերիշխան էր այն մտայնությունը, թե հայերն իրենց ազատությունը ձեռք պիտի բերեն կաթոլիկ Եվրոպայի միջոցով։ Ամբողջ միջնադարյան Հայաստանի ազատագրական գաղափարախոսության պատմությունը, շարունակում է նա, մինչև Իսրայել Օրու քաղաքական շրջադարձը, կրում էր պատրանքաշատ այդ մտայնության կնիքը։ «Հայերը,— գրել է գիտնականը,—Ռուսաստանի հետ հազորդակցություններ ունեին դեռ ԺԸ դարից առաջ, բայց այդ հարաբերությունները միայն առևտրական էին։ Ամենից առաջ Պետրոս Մեծը ուշադրություն դարձրեց հայերի վրա, նա հասկացավ, որ հայոց ազգի ձեռքով կարելի է ռուսաց իշխանությունը Անդրկովկասում

հաստատել»[1]։ Ալ. Երիցյան պատմաբանի համար հայ ազատագրական շարժման գործիչները՝ սկսած Իսրայել Օրուց, այն համոզմունքն ունեին արդեն, որ հենց Ռուսաստանն է այն իրական և միակ ուժը, որի օգնությամբ ազգաբանապես ըզկտված հայությունը կարող էր թոթափել օտարատիրության լուծը։ Հարկավ, ֆեոդալական-ճորտատիրական հարաբերություններ էին իշխում նաև Ռուսաստանում, բայց ի տարբերություն արևելյան բռնապետությունների, ռուսական կայսրության ընդերքում զարգանում էին առաջընթացի ապահովման նոր արտադրահարաբերություններ։ Արդեն այդ պահին Ռուսաստանն իր զարգացման մակարդակով անհամեմատ բարձր էր պարսկա-թուրքական մահմեդական աշխարհից։ Նա պատռում էր խավարի միջնադարյան վարագույրը, և անհրաժեշտ նախադրյալներ էր ստեղծում ռուսական ազգային մշակույթի առաջընթացի համար։ Ռուսական պետությունն ապրում էր ամրակայման այն շրջափուլը, երբ կայսրությունն արագորեն հզորանում էր ոչ միայն ըստ լայնքի, այլև ըստ խորքի՝ իր հաստատուն ու կայուն օրենքներով։

Հայ ժողովրդի ազատագրության գործը ռուսական զենքի աջակցությամբ իրագործելու գաղափարի սկզբնավորողները ելնում էին նաև կրոնադավանաբանական ընդհանրությունից, կարևոր մի գործոն, որն ինչպես Ալ. Երիցյանի, այնպես էլ նրա ժամանակակից Կ. Եզյանի համոզմամբ, առավել դյուրին պիտի դարձներ երկու ժողովուրդների կապերի ու համագործակցության զարգացումը։ Երիցյանի համար հիմնականում սրանք էին այն պատճառները, որոնց հաշվառմամբ հայ գործիչներն ի դեմս Ռուսաստանի տեսան այն իրական դաշնակցին, որն, անկասկած, առաջին հերթին դեպի Արևելք իր առաջխաղացման ծրագրերի իրացման շահերից ելնելով, պիտի գործուն աջակցություն ցույց տար հայերին՝ վերականգնելու քաղաքական ինքնուրույնությունը կամ ձեռք բերելու ինքնավարություն[2]։

Ալ. Երիցյանի նման հայեցակետն ինքնին հասկանալի էր։ Նա իր գործունեությունն սկսեց XIX դարի 60-ական թթ., մի ժամանակաշրջան, երբ արդեն քաղաքականապես ձևավորվել էին հայ հասարակական-քաղաքական հոսանքները։ Որպես մտածող անհատականություն, նա կարողացավ պահպանել հարաբերական ինքնուրույնություն, շրջանցել այդ հոսանքներից և ոչ մեկի հետևողական ախոյանը կամ գաղափարական պաշտպանը։ Հեռու մնալով արևելահայ հասարակական մտքի հակադիր բևեռների՝ հեղափոխական-դեմոկրատական և կղերա-աղայական ազդեցությունից, իր քաղաքական հայացքներով Երիցյանը գերազանցապես մերձակցում էր ազգային-պահպանողականների խոհեմ թևին, իսկ երբեմն էլ՝ լիբերալներին։ Իսկ վերջիններս, ինչպես հայտնի է, ունեին ընդգծված ռուսական կողմնորոշում։ Ալ. Երիցյանը, հատկապես 1870-ական թթ. գոհունակություն էր հայտնում Ռուսաստանի կողմից Անդրկովկասի տնտեսական և քաղաքական նվաճման հետևանքով հայերի համար ստեղծված անձի և գույքի ապահով վիճակից, ազգային ավանդույթները և ժառանգված արժեքները պահպանելու և զարգացնելու ընձեռված հնարավորությունից, հնարավորություն, որ իսպառ կամ համարյա բացակայում էր Արևմտյան Հայաստանում։ Առաջադիմական սկզբունք ընդունելով պատմականության մեթոդը, Ալ. Երիցյանը գալիս է վերջնական եզրահանգման՝ արևելյան բռնատիրության տապալումն Անդրկովկասում առաջադիմական իրողություն է, քանզի անկախ ցարիզմի գաղութային քաղաքականությունից, Ռուսաստանն օբյեկտիվորեն նպաստում էր երկրամասի արհեստագործության, առևտրի և մշակույթի վերընթացին, օրինականության հաստատմանը։ Ի տարբերություն արևմտյան տերությունների կողմից Թուրքիան տնտեսապես և քաղաքականապես գաղութացնելու բացահայտ միտումներին, ռուսական տիրապետության հետևանքով մայր երկրից սկսեցին «Այսրկովկաս թափանցել ռուսաց մտքի և լույսի ճառագայթները»։ Ոգևորված ռուս-թուրքական վերջին՝ 1877—1878 թթ. պատերազմում Ռուսաստանի ազատագրական առաքելու-

[1] Ալ. Երիցյան. Հայերի մասնակցությունը Ռուսաստանի՝ Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ.—«Փորձ», 1877—1878, № 2, էջ 390։

[2] Տե՛ս նույն տեղում։

թյամբ, Երիցյանը Արևմտյան Հայաստանի ազատագրման իր ակնկալությունները որոշակիորեն կապում էր դեպի Անատոլիայի խորքերն արշավող և Կ. Պոլսի մատույցներին մոտեցող ռուսական զորքերի հաղթանակի հետ։ Նա խորապես դիտակցում էր հայ ժողովրդի շահերը, դրանք սերտորեն շաղկապում Ռուսաստանի հովանավորության ներքո գտնվելու՝ հայ ազատագրական գաղափարաբանության մշակած հայեցակետի հետ։ Պատերազմի նախօրյակին և ընթացքում գրած իր հոդվածներում Երիցյանը խոսում էր վերջին երկու դարերում հայերի ռուսական կողմնորոշման գործնական հաղթանակի հնարավորությունների մասին, խորին ափսոսանք հայտնում, որ Եկատերինա II-ի մահով խափանվում է Հայաստանի ազատագրման ծրագիրը։ Պատմաբանը գոհ էր, որ XIX դարի առաջին երեսունամյակի ռուս-մահմեդական ուժգին զինաբախումների ժամանակաշրջանում հայ գործիչները հաղթանակի հանդեպ հավատ էին ներարկում ժողովրդի ամենալայն զանգվածներին և սուր գնում նրանց ձեռքը՝ մաճի ու մանգաղի, մուրճի ու համքարական գազգահի, արշինի և կշեռքի փոխարեն, իսկ վարդագույն ապագայով ապրող ժողովուրդն ամեն ինչ անում էր դյուրացնելու ռուս բանակների հաղթանակը։ Ներսես Աշտարակեցին հավաստիացնում էր հայ կամավորներին, թե «...Ռուսիո օգոստոփառ ինքնակալի ողորմած ուշադրություն պատկներ կհյուսեն թե ձեզ և թե բոլոր ձեր համազգիներին»[3], և ընդհուպ մինչև ռուս-պարսկական պատերազմի վերջը իր «ձեռն առած Քրիստոսի խաչն ու ցարի դրոշը» ներսեսը ռուսական բանակներին ցույց տված իր աջակցության համար բազմիցս արժանացավ ոչ միայն Կովկասի բարձր հրամանատարության, այլև «թագավորի համակրանքին ու վստահությանը»[4]։

Ալ. Երիցյանի ներկայացմամբ Աշտարակեցին հայ ազատագրական շարժման այն սակավ գործիչներից էր, որոնք ժամանակի «անպատեհության» համար չէին տրտնջում և անիրական համարում պահը, իսկ պատմական պահը Երիցյանն պատմաբանի համար XIX դարի սկիզբն էր, որի շեմին հայ ժողովուրդը կանգնած էր օտար բռնակալության շղթաները ոտքերին։ Երիցյանի մոտ հայ ազատագրական շարժման ղեկը ստանձնած գործիչ հայրենիքի փրկության ուղիները սպասում էր ոչ թե անցյալի հերոսների աճյունացած ոսկորների «կենսաձիր» լույսից, այլ հին դյուցազունների իրօրյա ժառանգորդներից, որոնք կենդանություն են տալիս ժողովրդին ու հայրենիքին։ Դարերի հեռավորությունից եկող հայ ազատագրական գաղափարը 1826 թ. սկսված ռուս-պարսկական պատերազմի շնորհիվ մարմին էր առել։ Իբրև ակնկալություններով ապրող անդրկովկասյան հայերի քաղաքական առաջնորդ, Աշտարակեցին մարտական հորդորներ էր կարդում և կոչեր արձակում ժամանակակիցներին, ոգեշնչում նրանց, թե մոտալուտ է հայրենի երկրի գարունը. «Հասավ ժամը, երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատությունը. հասավ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերակտնգնե իր վաղեմի անկախությունը. ոտքի կանգնե՛ք, հայոց քաջեր, թոթափեցեք պարսից լուծը, ուրախացրեք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցեք հայրենի հողերը և ապրեցեք ազատ... ժամ է արդեն, օն անդր... հիմա՜ կամ երբե՜ք»[5]։

Անցած ուղու իր վերելքի շրջանում Աշտարակեցին գործեց հավատարմությամբ և ինքնամերժ նվիրումով, նա համաժողովրդական մեծարանքի է արժանացել որպես ազատագրական շարժման ճանաչված ղեկավար։ Աշտարակեցին արտահայտում էր Երիցյանի բառերով ասված՝ «դարավոր բռնակալության» դեմ ազգային պատերազմի ելած արևելահայության շահերը։ Նրա հորդորներով էր, որ «...Կուրի եզերքից մինչև Արաքսի ափերը Հայք՝ հոգևորական և աշ-

---

3 Ալ. Երիցյան. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում. մաս Ա., Թիֆլիս, 1894, էջ 293։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 268—269։

խարհական, կին և տղամարդ, մեծ ու փոքր ամենքը աշխատում էին մասնակից լինել այդ կռվին»[6]։

Ալ. Երիցյանը ջերմ հայրենասեր էր և համազգային շահերի հետևողական պաշտպան։ Նվիրվելով հայ ժողովրդի հոգևոր վերածննդի գործին, առաջնահերթը նա համարում էր Հայկական հարցի լուծումը, մայր բնօրրանի մեծագույն հատվածի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը, սեփական հողի վրա, հայկական վիլայեթներում ապահով կյանք ստեղծելու խնդիրը։ Պատմաբանը դտնում էր, որ Ռուսաստանում ապրող հայը փրկված էր կործանարար «նեղիչների հանկարծահաս» անակնկալներից, ֆիզիկական ոչնչացման մշտական երկյուղից։

Այլ էր արևմտահայության վիճակը։ 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսի պայմանագրից հետո Արևմտյան Հայաստանում սկսվեց ավելի սուր կերպարանք ստանալ դավանանքի խտրականությունը, քրդերի և չերքեզների ասպատակությունները տրոհում էին ժողովրդին և զրկում նրան հայրենի երկրում ապրելու իրավունքից։ Անտանելի կացությունը ստիպում էր մարդկանց թողնել հայրենի եզերքը և դիմել օտար հորիզոններ։ Արտագաղթի հետևանքով քայքայվում էին երկրի արտադրողական ուժերը, կաշկանդվում էր հասարակական կյանքի առաջնթացը, թուլանում էր ժողովրդի դիմադրական ճակատը և ավելի դժվարանում նրա ազատագրության համար պայքարի գործը։

Ադրիանապոլսի պայմանագրով, արևմտյան տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ճնշման տակ, որոնց ձեռնտու չէր Ռուսաստանի ուժեղացումը Արևելքում, ի վնաս հայ ժողովրդի ազգային շահերի, Թուրքիային վերադարձվեցին Էրզրումը, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը, Կարսի և Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները, որոնք պատերազմի ընթացքում գրավվել էին ռուսական բանակի Կովկասյան կորպուսի կողմից։

Ադրիանապոլսի պայմանագրի արդյունքների վերլուծմամբ Ալ. Երիցյանն առաջ էր քաշում այն տեսակետը, որ Արևմտյան Հայաստանի հարցը սոսկ հայ-թուրքական կամ նույնիսկ հայ-ռուս-թուրքական հարաբերությունների հարց չէ։ Երիցս ճիշտ էր պատմաբանը, երբ առնչում էր ռուս-թուրք և արևմտաեվրոպական տերությունների հարաբերություններին, Մերձավոր Արևելքում նրանց գաղութատիրական, նվաճողական ծրագրերին։ Այն հավաար, որ Ռուսաստանը 1877 թ. պատերազմի մեջ էր մտել Թուրքիայի դեմ՝ հետամուտ ազատագրելու նրա լծի տակ գտնվող քրիստոնյաներին, նոր պարտավորություն էր դնում նաև այդ հավատը դավանող ժողովրդի պատմաբանի վրա, որը պետք է անցյալի իրողությունների և երևույթների անշեղ գնահատման և քաղաքական անշեղ կողմնորոշման ուժով գործնական շունչ հաղորդեր արդիական խորհուրդ պարունակող պատմության անանց էջերին։ Ալ. Երիցյանը «Փորձի» մի շարք համարներում սկսում է տպագրել «Հայերի մասնակցությունը Ռուսաստանի՝ Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ» ծավալուն ուսումնասիրությունը, որը թարգմանաբար տպագրվում է նաև «Тифлисский вестник» լրագրում։ Այդ աշխատության մեջ Ալ. Երիցյանը վերահմաստավորում էր ռուսական արքունիքի և բարձրագույն հրամանատարության հետ արևելահայ գործիչների քաղաքական փոխհարաբերությունների հավաստի պատմությունը։

Ռուս ցարերն անցյալում հովանավորել և ապաստան են տվել հազարավոր հայ գաղթականների, Ռուսաստանին հայերի մատուցած անձնվեր հավատարմությունը, ջանասիրությունն ու ծառայությունները բազմիցս վկայվել և արձանագրվել են ռուս մեծ ինքնակալների երախտագիտական հրովարտակներով։ «Անցյալ դարու ընթացքում,—գրում էր Երիցյանը,—գաղթականության շնորհիվ այնքան բազմացավ Ռուսիո հայ հպատակների թիվը, որ հուսիսային գահակալները յուրյանց սրտին մոտ համարեցին հայոց բարոյական-կենսական շահերն ու 1800 թվականից սկսած կտրուկ կերպով միջամուխ եղան հեռու-հեռու պարսկական սահմաններում գտնվող էջմիածնական աթոռի հայրապետների ընտրության գործում»[7]։

---

6 Նույն տեղում, էջ 257։

7 Նույն տեղում, էջ 9։

Պատմական հարուստ փաստերի վրա խարսխված գիտական հրապարակախոսության մի հազվագյուտ նմուշ էր դա, ուր Ալ. Երիցյանը հիշեցնում էր Ռուսաստանի իրօրյա տիրակալին և քաջալերում նրան՝ պաշտպանելու աշխարհի ստեղծագործ և առաքինի ժողովուրդներից մեկի իրավունքները՝ ի տրիտուր նրա ծառայությունների և հավատարմության։ Ուսումնասիրությունը ավարտվում է Ալեքսանդր Առաջինի՝ հայերին ուղղած 1813 թ. հրովարտակով, ուր գնահատելով հայոց հավատարմությունը, ցարը երախտագիտության խոսք է ուղղում հայ ժողովրդին[8]։

Բեռլինի կոնգրեսից հետո Աբդուլ Համիդի դիվային քաղաքականության մեքենան նորանոր միջոցների էր դիմում ծուռ հայելու մեջ ներկայացնելու Հայկական հարցը։ Այն բանից հետո, երբ վեց տերությունների դեսպանները բարենորոգումները իրականացնելու պահանջով համատեղ վերջնագիր են ներկայացնում օսմանյան կառավարությանը և սուլթանն իր արտաքին գործերի նախարար Արիֆին փաշայի օգնությամբ կեղծում է Արևմտյան Հայաստանի բնակչության վիճակագրական տվյալները, երբ թուրքական կառավարությունը 1880 թ. հունիսին ի լուր աշխարհի հայտարարում է, որ Արևմտյան Հայաստանում հայ բնակչությունը կազմում է ընդհանուրի ընդամենը 17 տոկոսը, այդ պահին թուրքական կեղծարարների գլխին ծանրորեն իջնում է հայ պատմաբանի հարվածող գրիչը։

1878 թ. Կարինում աշխատելով որպես ռուսական բանակի շտաբի հատուկ հանձնարարությունների պաշտոնյա, Ալ. Երիցյանը, որպես առաջադրանք, կազմում է Էրզրումի վիլայեթի վիճակագրությունը։ Այդ նպատակի համար օգտագործելով օսմանյան կառավարության պաշտոնական տվյալները, ռուսական գավառապետների, հայոց պատրիարքարանի և իր հավաքած վիճակագրական նյութերը, Ալ. Երիցյանն այս ամենի հիման վրա տպագրում է մի աշխատություն[9], ուր անդրադառնալով օսմանյան կառավարության հրապարակած փաստաթղթին, գրում է, որ նման հայտարարությամբ օսմանյան տերությունը ցանկանում է նվազեցնել «հայոց իրավունքը քաղաքական և վարչական օրենքների պաշտպանությունը վայելելու... Մի կողմ թողնելով Տաճկաստանի քրիստոնեից խնդիրը, այս անգամ պարտք եմ համարում պնդել, որ օսմանյան պետության հրատարակած հիշյալ թվանշանը ոչ միայն սխալ է, այլև պաշտոնյաների հնարած սուտ»[10]։

Ալ. Երիցյանը չէր բավարարվում Թուրքիայի վարած քաղաքականության քննադատությամբ, Բարձր Դռան կողմից սարքված պաշտոնական փաստաթղթերի մերկացմամբ։ Նա բացահայտեց նաև ամբողջ Մերձավոր Արևելքն ու Թուրքիան «յուրյանց բարոյական ազդեցության տակ նվաճելու» Անգլիայի և Ֆրանսիայի գաղութատիրական նկրտումները[11]։

Ավելին, երբ ռուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում նոր թափ ստացան հայերի կեղեքումներն ու հալածանքները, Ալ. Երիցյանն այդ իրողությունը բացատրեց նաև նրանով, որ տերությունները հայերին անպաշտպան են թողել Թուրքիայում։ Եթե կաթոլիկները գտնվում են Ֆրանսիայի հովանավորության ներքո, բողոքականներին պաշտպանում է Անգլիան, ապա տաճիկ ամբոխի և կառավարող պաշտոնյաների աչքում հայ քրիստոնյաները պաշտպան չունեն։ Ալ. Երիցյանը դժգոհում էր նաև ցարիզմի քաղաքականությունից, որի ընթացքը 1880-ական թթ. այն չէր, ինչ որ կցանկանային հայ և ռուս ժողովուրդների մերձեցման առավել ջերմ հնարավորություններ փափագող հայ գործիչները։

Համոզվելով, որ Հայկական հարցի լուծման ուղղությամբ փոխվել է ռուսական կառավարության մարտավարությունը, հայ հասարակական-քաղաքա

---

8 Տե՛ս «Փորձ», 1877—1878, № 1—2։

9 Ал. Ерицян. Материалы для описания Турецкой Армении, Эрзрумский вилайет. Тифлис, 1884.

10 «Փորձ», 1880, № 6—7, էջ 216։

11 Տե՛ս Ա լ. Ե ր ի ց յ ա ն. Ներսես Աշտարակեցի.—«Փորձ», 1881, № 3, էջ 59։

կան մտքի նշանավոր գործիչներից շատերը, որոնց թվում և Երիցյանը, ենթարկվում են նոր ժամանակի թելադրանքին՝ ակամա դառնալով հարմարվողական։ Երիցյանը համարյա դադարեց գրել Հայկական հարցի մասին և ապարդյուն էր համարում ազատագրական շարժումների ծավալումը Արևմտյան Հայաստանում, քանի որ առանց Ռուսաստանի գործուն արտաքին հայանպաստ քաղաքականության առկայության՝ ապարդյուն է ապստամբական ելույթներ ունենալը, իմաստուն մի պատգամ, որին, տարաբախտաբար, հետագայում հասու չեղան շարժման բազում ղեկավարներ։ Պատմահայեցողությամբ և հասարակական կյանքի երևույթների ընկալմամբ գերազանցապես լինելով իդեալիստ, այնուամենայնիվ, Ալ. Երիցյանը կարողացավ պատմական վճռորոշ շատ իրողություններ բացատրել համազգային շահերով թելադրված բուրժուական ռեալիզմի դիրքերից։ Նա Ռուսաստանն ընկալում էր իբրև մի ամբողջական երկիր՝ զերծ ներքին խառնակություններից, գերադասում էր ռուսական պետական կարգն ու օրենքները, դրանք համեմատում Օսմանյան կայսրության հետ և մատնանշում Ռուսաստանի առավելությունները։ «Այս տերության մեջ,— 1870-ական թթ. վերջերին 1850-ական թթ. Ռուսաստանի մասին գրում էր Երիցյանը,—ժողովուրդն արդեն նվիրված էր մասամբ հասարակական կյանքի մեջ մասնակցելու, ստեղծելով մի նոր լուսավորություն, սկիզբն առավ մի նոր գրականություն, պատրաստվում էին ստրուկների ազատությունը, դատարանական հեղափոխությունը, գյուղա-վարչական կանոնադրությունը և շատ ուրիշ բարենորոգումներ, որոնց համակրում և մասնակցում էր ժողովուրդը, ամեն տեղ շարժում և կյանք էր սկսում։ Բնականաբար, Ռուսաստանի հայերիս վերաբերմամբ առանց ազդեցության չէր կարող անցնել այդ բոլորը, ինչպես և չանցավ»[12]։ Ալ. Երիցյանը Ռուսաստանի տեսական հետընթացին չէր հավատում, այն ժամանակավոր է։ Հենց դրանից ելնելով էլ նա Հայկական հարցի լուծման հեռանկարները կապում էր Ռուսաստանի արևելյան քաղաքականության հաջողությունների հետ, հստակորեն սահմանազատում էր Հայկական հարցը և օսմանյան բռնապետական լուծը թոթափելու համար հայ ժողովրդի դարավոր պայքարը։ Եթե առաջինը, որպես միջազգային դիվանագիտության օբյեկտ, առաջացավ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով, ապա երկրորդը, որպես հայ ժողովրդի ազատության խնդիր, գոյություն ուներ պետականության կորստից ի վեր։ Ալ. Երիցյանի համար ֆիզիկական ոչնչացումից փրկվելու առումով, չկար արևելահայ հարց, քանի որ Արևելյան Հայաստանի միացմամբ այդ հարցը լուծված էր։ Իր հայրենիքի կովկասյան հատվածում հայը ֆիզիկապես ապահով էր, այստեղ չկար «հավելյալ արյան» խնդիր։ Ռուսաստանը կես դար առաջ, գրում էր Երիցյանը, կանխել էր արևելահայության ազատագրական պայքարի միջազգայնացումը։

Այսպիսով, այն պատմաշրջանը, որի ուսումնասիրման համար Ալ. Երիցյանը հատկացրեց շուրջ կես դար, ըստ էության, շատ բարդ ու հակասական էր։ Ժամանակի հակասությունների միջավայրում երբեմն տուրք տալով անանպաստ տեսակետներին, պատմաբանը կարողացավ ի վերջո ճիշտ գնահատել հայ-ռուսական հարաբերությունների զարգացման առաջադիմական միտումները, Հայկական հարցի լուծման գործընթացի ջանքերում Ռուսաստանի պոզիտիվ և Արևմուտքի նեգատիվ դերը։

---

12 Ալ. Երիցյան. Ստեփանոս Նազարյանց և նորա գրական գործունեությունը,—«Փորձ», 1879, № 9, էջ 61։